

## **ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԼԱՆ**

**ՀԱԷԿ-ի երկրորդ էներգաբլոկի շահագործման  
նախագծային ժամկետի երկարաձգման**

## ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

**Խափանումների վերլուծություն** – ՀԿԲ-երի (СКК) խափանման տեսակի, մեխանիզմի, պատճառների և արմատական պատճառի որոշման ու փաստաթղթային ձևակերպման սխեմատիկ գործընթաց:

**ԱԷԿ-ի անվտանգություն** – ԱԷԿ-ի հատկությունը՝ նորմալ և վթարային իրավիճակներում սահմանափակել ճառագայթումային ազդեցությունն անձնակազմի, բնակչության և շրջապատող միջավայրի վրա սահմանված արժեքներով:

**Շահագործման հանձնում** – գործընթաց, որի ընթացքում ԱԷԿ-ի էներգաբլոկի համակարգերն ու սարքավորումը կամ ԱԷԿ-ն ամբողջությամբ սկսում են գործել, և ստուգվում է նրանց համապատասխանությունը նախագծին: Գործընթացը ներառում է նախագործարկման կարգաբերման աշխատանքները, ֆիզիկական և էներգետիկական գործարկումները, փորձա-արդյունաբերական շահագործումը և ավարտվում է ԱԷԿ-ը արդյունաբերական շահագործման հանձնելով:

**Վերականգնում** – օբյեկտի՝ անաշխատունակ վիճակից աշխատունակ վիճակի փոխադրման գործընթացը:

**Վերականգնվող տարր** – տարր, որի համար դիտարկվող իրավիճակում աշխատունակ վիճակի վերականգնումը նախատեսված է նորմատիվ և (կամ) կոնստրուկտորական (նախագծային) փաստաթղթերով:

**Թերություն** – արտադրանքի յուրաքանչյուր առանձին անհամապատասխանությունը սահմանված պահանջներին:

**Անվտանգության դեֆիցիտ** – ԱԷԿ-ի էներգաբլոկի ապահովված չլինելը անվտանգության որևէ գործառույթով՝ ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում գործող նորմերի և կանոնների պահանջներով որոշվող ծավալով:

**Արատորոշում** – տվյալների ուսումնասիրում և գնահատում ՀԿԲ-երի վիճակի և/կամ նրանց ներկա վիճակն առաջացրած պատճառների որոշման համար:

**Հնացման գերակշռող մեխանիզմ** – տարրի բաղկացուցիչ մասերում և կառուցվածքային նյութերում անդարձելի անբարենպաստ փոփոխությունների կուտակման մեխանիզմ, որը հիմնական (գերակշռող) ներդրումն ունի նրա հնացման գործընթացում:

**Շահագործման լրացուցիչ ժամկետ** – ԱԷԿ-ի էներգաբլոկի՝ նշանակված ծառայության ժամկետից դուրս ողջ հզորությամբ շահագործման օրացուցային տևողությունը (ժամանակահատվածը):

Տարրի փոխարինում – վատթարացած կամ աշխատունակությունը կորցրած ՀԿԲ-երի (կամ նրանց մասերի) շահագործումից դուրս բերման և նրանց փոխարեն այլ ՀԿԲ-երի (կամ նրանց մասերի) տեղակայման տեխնիկա-կազմակերպչական միջոցառումներ, որոնք ուղղված են շահագործման պահանջվող հուսալիության և անվտանգության ապահովմանը:

**Զգալի թերություն**– թերություն, որն էապես ազդում է ՀԿԲ-երի ըստ նպատակի օգտագործման վրա և/կամ նրանց երկարակեցության վրա, բայց կրիտիկական չէ:

**Մաշվածք** – խափանում հնացման մեխանիզմների ազդեցության հետևանքով:

**Սարքին վիճակ** – տարրի այնպիսի վիճակ, երբ այն համապատասխանում է նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի, նախագծային կոնստրուկտորական փաստաթղթերի և/կամ շահագործման տեխնիկական փաստաթղթերի բոլոր պահանջներին:

**Փորձարկում** – փորձարկումների օբյեկտի հատկությունների քանակական և (կամ) որակական բնութագրերի՝ որպես նրա վրա ներգործության արդյունքի փորձարարական որոշում նրա գործառնման ժամանակ, օբյեկտի (կամ) ազդեցությունների մոդելավորման ժամանակ:

**Հիմնական նորոգում** – համապարփակ նորոգում, ՀԿԲ-երի սկզբնական որակների վերականգնում:

**Փոխհատուցիչ միջոցներ**– տեխնիկական և կազմակերպչական միջոցներ, որոնք ուղղված են անվտանգության վրա բացահայտված անվտանգության դեֆիցիտների ազդեցության մասնակի կամ լրիվ բացառմանը և (կամ) սահմանափակմանը:

**Փոխհատուցիչ միջոցառումներ** – գործող նորմերից և կանոններից ԱԷԿ-ի բլոկի շեղումների վերլուծության հիման վրա մշակված տեխնիկական և կազմակերպչական միջոցառումներ, որոնք ուղղված են անվտանգության վրա նրանց բացասական ազդեցության հետևանքների մեղմացմանը, այդ թվում նաև խորեշելոնային պաշտպանության արգելքների արդյունավետության բարձրացմանը, անձնակազմի սխալների կամ սխալական որոշումների ընդունման հավանականության նվազեցմանը:

**Շահագործման ավարտ** – օբյեկտը շահագործումից դուրս բերելու պահը:

**Գոյապաշարային բնութագրերի վերահսկում** – նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերում, նախագծային կոնստրուկտորական փաստաթղթերում և/կամ շահագործման տեխնիկական փաստաթղթերում սահմանված պահանջներին տարրի գոյապաշարային բնութագրերի ընթացիկ արժեքների համապատասխանության պարբերական գնահատում (շահագործման ընթացքում):

**Տեխնիկական վիճակի վերահսկում** – վիճակի ցուցանիշների կամ գործառնական ցուցանիշների հսկում, չափում և/կամ կանխատեսում որոշակի անկախ պարամետրի (ժամանակի կամ ցիկլերի) համեմատությամբ՝ ներկայումս կամ ապագայում, ընդունելիության չափանիշների պահպանումն ապահովելով, ՀԿԲ-երի գործելու ունակության վերաբերյալ եզրահանգումներ ստանալու նպատակով:

**Արմատական պատճառ** – ՀԿԲ-երի դիտվող վիճակի հիմնական պատճառը, որը վերացնելուց հետո բացառվում է այդ վիճակի կրկնակի առաջացումը:

**Սահմանային վիճակի չափանիշ** – տարրի սահմանային վիճակի հատկանիշ կամ հատկանիշների ամբողջություն, որոնք սահմանված են նորմատիվ և (կամ) կոնստրուկտորական (նախագծային) փաստաթղթերով:

**Ընդունելիության չափանիշ** – վիճակի գործառնական ցուցանիշի որոշված սահմանային արժեքը, որը կիրառվում է ՀԿԲ-երի՝ նախագծային գործառույթի կատարման ունակությունը գնահատելու համար:

**Կրիտիկական թերություն** – թերություն, որի առկայության դեպքում արտադրանքի օգտագործումն ըստ նպատակի գործնականորեն անհնար է կամ անթույլատրելի է:

**Սակավանշանակ թերություն** – թերություն, որն էապես չի ազդում արտադրանքի ըստ նպատակի օգտագործման և նրա երկարակեցության վրա:

**Հնացման մեխանիզմ** – կոնկրետ գործընթաց, որը տարրի շահագործման ժամանակ հանգեցնում է նրա բաղկացուցիչ մասերի նյութերում և կառուցվածքային նյութերում անդարձելի անբարենպաստ փոփոխությունների կուտակմանը:

**Տարրերի վերափոխում (մոդիֆիկացիա)** – ԱԷԿ-ի շահագործման պահանջվող հուսալիության և անվտանգության ապահովմանն ուղղված կազմակերպչական և տեխնիկական միջոցառումների կոմպլեքս, որն իրականացվում է կիրառման տրված

ռեժիմներում և պայմաններում աշխատող ԱԷԿ-ի տարրերի համար օգտագործվող նյութերի, առանձին հանգույցների, կառուցվածքի կատարելագործման նպատակով:

**Հուսալիություն** – տարրի հատկությունը՝ ժամանակի ընթացքում պահպանել կիրառման, տեխնիկական սպասարկման, պահման և փոխադրման տրված ռեժիմներում և պայմաններում պահանջվող գործառույթները կատարելու ունակությունը բնութագրող բոլոր պարամետրերի արժեքները թույլատրելի սահմաններում:

**Հսկիչ մարմնի պահանջներ** – փորձարկում, տրամաչափարկում կամ տեսչական ստուգում՝ ՀԿԲ-երի անհրաժեշտ որակի պահպանումը, անվտանգության սահմանների պահպանմամբ շահագործումը և շահագործման սահմանափակիչ պայմանների պահպանումն ապահովելու նպատակով:

**Նշանակված գոյապաշար** – գումարային աշխատատևությունը, որի սպառվելուց հետո տարրի շահագործումը պետք է դադարեցվի՝ անկախ նրա տեխնիկական վիճակից:

**ԱԷԿ-ի շահագործման նշանակված ժամկետը** – ԱԷԿ-ի շահագործման՝ նախագծով սահմանված օրացուցային ժամանակահատվածը, որի սպառվելուց հետո ԱԷԿ-ի հետագա շահագործումը կարող է շարունակվել միայն նրա անվտանգության և տնտեսական արդյունավետության հետազոտությունների հիման վրա կայացրած հատուկ որոշմամբ:

**Աշխատատևություն** – տարրի աշխատանքի տևողությունը կամ ծավալը:

**Աշխատատևություն մինչև խափանումը** – տարրի աշխատատևությունը շահագործման սկզբից մինչև առաջին խափանումը:

**Շահագործման սկիզբ** – պատրաստվածքը շահագործման հանձնելու պահը:

**Չվերականգնվող տարր** – տարր, որի համար դիտարկվող իրավիճակում աշխատունակ վիճակի վերականգնումը նախատեսված չէ նորմատիվ և/կամ կոնստրուկտորական (նախագծային) փաստաթղթերով կամ տնտեսապես նպատակահարմար չէ:

**Չփոխարինվող տարր** – տարր, որի փոխարինումն անհնար է և/կամ տնտեսապես նպատակահարմար չէ:

**Անսարք վիճակ** – տարրի այնպիսի վիճակ, երբ այն չի համապատասխանում նորմատիվ և/կամ կոնստրուկտորական (նախագծային) փաստաթղթերի թեկուզև մեկ պահանջի:

Անաշխատունակ վիճակ – տարրի այնպիսի վիճակ, երբ տրված գործառույթները կատարելու ունակությունը բնութագրող թեկուզև մեկ պարամետրի արժեքը չի համապատասխանում նորմատիվ և/կամ կոնստրուկտորական (նախագծային) փաստաթղթերի պահանջներին:

**Չվերացվող թերություն** – թերություն, որի վերացումը տեխնիկապես անհնար է կամ տնտեսապես նպատակահարմար չէ:

**Նորմալ պայմաններ** – պատշաճ կերպով նախագծված, պատրաստված, տեղակայված, շահագործվող և տեխնիկական սպասարկում անցնող ՀԿԲ-երի շահագործման պայմանները՝ բացառությամբ նախագծային վթարի ելակետային պատահարների պայմանների:

**Որոշիչ պարամետր** – տարրի պարամետր, որն օգտագործվում է վերահսկման ժամանակ այդ տարրի տեխնիկական վիճակի տեսակի որոշման համար:

**Մնացորդային գոյապաշար** – ժամանակի իրական միջակայք՝ տվյալ պահից մինչև ՀԿԲ-երի ապամոնտաժումը կամ տարրի գումարային աշխատատևությունը նրա տեխնիկական վիճակի վերահսկման պահից մինչև անցումը սահմանային վիճակի:

**Խափանում** – պատահար, որը կայանում է օբյեկտի աշխատունակ վիճակի խախտման մեջ:

**Գոյապաշարային բնութագրերի գնահատում** – գոյապաշարային բնութագրերի թվային արժեքների որոշում:

**Հնացման գնահատում** – համապատասխան տեղեկատվության գնահատում՝ թույլատրելի չափանիշների սահմաններում գործելու ՀԿԲ-երի ընթացիկ և ապագա ունակության վրա հնացման էֆեկտների ազդեցությունը որոշելու համար:

**Հնացման պարամետր** – տարրի կառուցվածքային նյութերում և/կամ նրա բաղկացուցիչ մասերում անդարձելի փոփոխությունների կուտակման գործընթացը բնութագրող պարամետր:

**Գոյապաշարային բնութագրերի վերանշանակում** – վերահսկման, գնահատման և կանխատեսման արդյունքների վերլուծության հիման վրա տարրի՝ փաստաթղթերում սահմանված գոյապաշարային բնութագրերի վերանշանակման ընթացակարգը:

**Վնասվածք** – պատահար, որը կայանում է տարրի սարքին վիճակի խախտման մեջ, որի դեպքում պահպանվում է աշխատունակ վիճակը:

**Վնասող գործոն** – ազդեցություն տարրի վրա, որի հետևանքով նրա մեջ զարգանում են հնացման գործընթացներ:

**Վիճակի ցուցանիշ** – բնութագիր, որը կարելի է վերահսկել, չափել կամ կանխատեսել, ընդունելիության չափանիշների պահպանումն ապահովելով, ներկայումս կամ ապագայում ՀԿԲ-երի գործելու ունակության անուղղակի կամ ուղղակի որոշման համար:

**Սահմանային վիճակ** – տարրի այնպիսի վիճակ, որի դեպքում նրա հետագա շահագործումն անթույլատրելի կամ աննպատակահարմար է, կամ էլ նրա աշխատունակ վիճակի վերականգնումն անհնար կամ աննպատակահարմար է:

**Նախագծային պայմաններ** – սպասվող իրական աշխատանքային պայմանների համեմատ պաշարով որոշվող հիպոթեզային պայմաններ:

**Գոյապաշարային բնութագրերի կանխատեսում** – օբյեկտի մնացորդային գոյապաշարի գնահատման ընթացակարգ:

**Տեխնիկական վիճակի կանխատեսում** – տարրի տեխնիկական վիճակի տրված հավանականությամբ որոշումը շահագործման ժամանակի առաջիկա միջակայքի համար:

**Աշխատունակ վիճակ** – տարրի այնպիսի վիճակ, որի դեպքում տրված գործառույթները կատարելու ունակությունը բնութագրող բոլոր պարամետրերի արժեքները համապատասխանում են նորմատիվ և/կամ կոնստրուկտորական (նախագծային) փաստաթղթերի պահանջներին:

**Աշխատանքային պայմաններ** – բոլոր իրական պայմաններն են, որոնք ազդեցություն են գործում ՀԿԲ-երի վրա: Դրանց թվում են շահագործման պայմանները (ներառյալ նորմալ պայմանները և սխալի հետևանքով առաջացած պայմանները, ինչպես նաև նախագծով նախատեսված անցումային պրոցեսները) և վթարային պայմանները:

**Նորոգում** – օբյեկտի (համակարգերի և տարրերի) աշխատունակ կամ սարքին վիճակի վերականգնման և/կամ նրա գոյապաշարի վերականգնման գործողությունների կոմպլեքս:

**Նորոգապիտանիություն** – տարրի հատկությունը, որը կայանում է տեխնիկական սպասարկման և նորոգման միջոցով աշխատունակ վիճակի պահպանմանը և վերականգնմանը հարմարված լինելու մեջ:

**Գոյապաշար** – օբյեկտի գումարային աշխատատևությունը նրա շահագործման սկզբից կամ նորոգումից հետո նրա վերականգնումից մինչև անցումը սահմանային վիճակի:

**Գոյապաշարային բնութագրեր** – երկարակեցության պարամետրերի, հնացման պարամետրերի քանակական արժեքներ. աշխատատևություն, աշխատատևություն մինչև խափանումը, միջխափանումային աշխատատևություն, վերականգնման տևողություն,

գոյապաշար, ծառայության ժամկետ, պահաժամկետ, մնացորդային գոյապաշար, նշանակված գոյապաշար, նշանակված ծառայության ժամկետ, նշանակված պահաժամկետ:

**Շահագործման պայմանների մեղմացում** – տարրի կիրառման պայմանների և ռեժիմների փոփոխման կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներ, որոնք ուղղված են ԱԷԿ-ի շահագործման պահանջվող հուսալիության և անվտանգության ապահովմանը:

**Մասնագիտացված կազմակերպություն** – գոյապաշարային բնութագրերի կառավարման աշխատանքների իրականացմանը ներգրավվող նախագծային, կոնստրուկտորական, նյութագիտական կազմակերպություն, որն ունի ՀՀ ՄԱԿ ՊԿ-ի կողմից ճանաչված՝ տվյալ տեսակի աշխատանքներ կատարելու արտոնագիր:

**Ծառայության միջին ժամկետ** – ծառայության ժամկետի (գոյապաշարի) մաթեմատիկական սպասումը:

**Ծառայության ժամկետ** – շահագործման օրացուցային տևողությունը տարրի շահագործման սկզբից կամ նորոգումից հետո նրա վերականգնումից մինչև անցումը սահմանային վիճակի:

**Հնացում** – տարրի կառուցվածքային նյութերում և բաղկացուցիչ մասերի նյութերում անդարձելի անբարենպաստ փոփոխությունների կուտակման գործընթաց:

**Տեխնիկական սպասարկում** – ըստ նպատակի օգտագործման, սպասման, պահման և փոխադրման ժամանակ տարրի աշխատունակության կամ սարքինության պահպանման գործողություն կամ գործողությունների կոմպլեքս:

**Տեխնիկական վիճակ** – վիճակ, որը բնութագրվում է ժամանակի որոշակի պահին, որոշակի աշխատանքային պայմաններում և արտաքին միջավայրի պայմաններում տարրի տեխնիկական փաստաթղթերում սահմանված պարամետրերի արժեքներով:

**Գոյապաշարային բնութագրերի կառավարում** – տարրի՝ նորմատիվ փաստաթղթերում սահմանված գոյապաշարային բնութագրերի ապահովմանը կամ վերանշանակմանն ուղղված կազմակերպչական և տեխնիկական միջոցառումների և ընթացակարգերի կոմպլեքս:

**Սահմանված գոյապաշար** – ժամանակամիջոց, որի ընթացքում, ինչպես ապացուցվել է փորձարկումների, վերլուծության կամ շահագործման փորձի հիման վրա, ՀԿԲ-երը ունակ կլինեն գործել, ապահովելով ընդունելիության չափանիշների պահպանումը, շահագործման որոշակի պայմաններում՝ պահպանելով նախագծային վթարի կամ նախագծային երկրաշարժի դեպքում իրենց անվտանգության գործառույթները կատարելու ունակությունը:

**Վերացվող թերություն** – թերություն, որի վերացումը տեխնիկապես հնարավոր է և տնտեսապես նպատակահարմար է:

**Գործառական ցուցանիշ** – վիճակի ցուցանիշ, որն անմիջականորեն արտացոլում է ՀԿԲ-երի գործելու ունակությունը տվյալ պահին՝ ապահովելով ընդունելիության չափանիշների պահպանումը:

**Տարրեր** – սարքավորումներ, սարքեր, խողովակաշարեր, մալուխներ, շինարարական կառուցատարրեր և այլ պատրաստվածքներ, որոնք ապահովում են տրված գործառույթների կատարումը ինքնուրույն կամ համակարգերի կազմում և որոնք նախագծում դիտարկվում են որպես կառուցվածքային միավորներ՝ հուսալիության և անվտանգության վերլուծություններ կատարելիս:

**Շահագործում** – տարրի կենսացիկլի այն փուլը, երբ իրականացվում, պահպանվում և վերականգնվում է նրա որակը:

**Շահագործական խափանում** – խափանում, որն առաջացել է շահագործման սահմանված կանոնների և (կամ) պայմանների խախտման հետ կապված պատճառով:

**Շահագործման պայմաններ** – մինչև նախագծային վթարը կամ նախագծային երկրաշարժը գոյություն ունեցող աշխատանքային պայմանները՝ ներառյալ նորմալ պայմանները և սխալի հետևանքով առաջացած պայմանները:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

|            |                                                                                                                                                                        |
|------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| ՀԱԷԿ       | – Հայկական ատոմային էլեկտրակայան                                                                                                                                       |
| ԱԳ         | – (ռեակտորի) ակտիվ գոտի                                                                                                                                                |
| ՎՊ-1(2, 3) | – առաջին (երկրորդ, երրորդ) կարգի վթարային պաշտպանություն                                                                                                               |
| ՊԱ         | – պահման ավազան                                                                                                                                                        |
| ՎԱ         | – վերաբեռնման ավազան                                                                                                                                                   |
| ՎԲ         | – (ռեակտորի) վերին բլոկ                                                                                                                                                |
| ՆԻՍ        | – (ռեակտորի) ներիրանային սարքեր                                                                                                                                        |
| ԳՏ         | – §ՀԱԷԿ՝ ՓԲԸ գլխավոր տնօրեն                                                                                                                                            |
| ԳԾ         | – §ՀԱԷԿ՝ ՓԲԸ գլխավոր ճարտարագետ                                                                                                                                        |
| ՀՀ ՄԱԿ ՊԿ  | – ՀՀ Միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե                                                                                                               |
| ԳԾԿ        | – գլխավոր շրջանառու կոնտուր                                                                                                                                            |
| ԳԾԽ        | – գլխավոր շրջանառու խողովակաշար                                                                                                                                        |
| ՇԼԺ        | – շահագործման լրացուցիչ ժամկետ                                                                                                                                         |
| §ՀԱԷԿ՝ ՓԲԸ | – §Հայկական ատոմային էլեկտրակայան՝ փակ բաժնետիրական ընկերություն                                                                                                       |
| ԳՏՏՌ       | – գլխավոր տնօրենի տեակալ ռեժիմի գծով                                                                                                                                   |
| ԳՏՏՇԺԵ     | – գլխավոր տնօրենի տեղակալ շահագործման ժամկետի երկարացման գծով                                                                                                          |
| ԳՏՏՖԷ      | – գլխավոր տնօրենի տեղակալ ֆինանսների և էկոնոմիկայի գծով                                                                                                                |
| ԳԾՏԱ       | – գլխավոր ճարտարագետի տեղակալ անվտանգության գծով                                                                                                                       |
| ԳԾՏԱ       | – գլխավոր ճարտարագետի տեղակալ արդիականացման գծով                                                                                                                       |
| ԳԾՏՎ       | – գլխավոր ճարտարագետի տեղակալ վերանորոգման գծով                                                                                                                        |
| ԳԾՏՇ       | – գլխավոր ճարտարագետի տեղակալ շահագործման գծով                                                                                                                         |
| ՊՄ         | – տարրերի տեխնիկական սպասարկման և նորոգման համար անհրաժեշտ և ըստ նպատակի ու օգտագործման առանձնահատկությունների լրակազմված պահեստամասեր, գործիքներ, պարագաներ և նյութեր |
| ՃՓ         | – ճնշման փոխհատուցիչ                                                                                                                                                   |
| ՀՀ         | – համալիր հետազոտում                                                                                                                                                   |
| ՌԻ         | – ռեակտորի իրան                                                                                                                                                        |
| ԱԷՄԳ       | – Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն                                                                                                                        |
| ՆՏՓ        | – նորմատիվ-տեխնիկական փաստաթղթեր                                                                                                                                       |
| ԱՀՀ        | – անվտանգության հիմնավորման հաշվետվություն                                                                                                                             |
| ՎՆԿԲ       | – վերանորոգման նախապատրաստման և կատարման բաժին                                                                                                                         |
| ԱԷԿ ՇԱՀԿ   | – ԱԷԿ-ների շահագործման ապահովման հիմնական կանոններ                                                                                                                     |
| ԳԼՇԵԲ      | – գոյապաշարի և շահագործման երկարացման բաժին                                                                                                                            |
| ԱԶՀ        | – աշխատած ջերմանջատիչ հավաքվածք                                                                                                                                        |
| ԱՄՎ        | – աշխատած միջուկային վառելիք                                                                                                                                           |
| ՆԿՓ        | – նախագծային կոնստրուկտորական փաստաթղթեր                                                                                                                               |
| ՈԱԾ        | – որակի ապահովման ծրագիր                                                                                                                                               |
| ՊԿՎ        | – պլանային կանխիչ վերանորոգում                                                                                                                                         |
| ՇԺԵ        | – շահագործման ժամկետի երկարացում                                                                                                                                       |

|               |                                                           |
|---------------|-----------------------------------------------------------|
| <b>ՀՀ</b>     | – Հայաստանի Հանրապետություն                               |
| <b>ՃԹ</b>     | – ճառագայթաակտիվ թափոններ                                 |
| <b>ՂՓ</b>     | – ղեկավար փաստաթուղթ                                      |
| <b>ՌՏ</b>     | – ռեակտորային տեղակայանք                                  |
| <b>ԳԲ</b>     | – գոյապաշարային բնութագրեր                                |
| <b>ԱՀ</b>     | – անվտանգության համակարգ                                  |
| <b>ԱԿՀ</b>    | – անվտանգության համար կարևոր համակարգ                     |
| <b>ՏՎևՄԱԾ</b> | – տեխնիկական վերահսկման և մետաղի արատորոշման ծառայություն |
| <b>ՀԿԲ</b>    | – համակարգեր, կառուցատարրեր և բաղադրամասեր                |
| <b>ԿՇԺԵՀ</b>  | – կայանի՝ շահագործման ժամկետի երկարացման հանձնաժողով      |
| <b>ՋՀ</b>     | – ջերմանջատիչ հավաքվածք                                   |
| <b>ՏՍևՆ</b>   | – տեխնիկական սպասարկում և նորոգում                        |
| <b>ՇՏՓ</b>    | – շահագործման տեխնիկական փաստաթղթեր                       |
| <b>ՄՎ</b>     | – միջուկային վառելիք                                      |

# 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## 1.1. Նշանակությունն ու նպատակը

1.1.1 «ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման ներդրումային պլանը» մշակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարացման վերաբերյալ 19.04.2012 թ.-ի № 461-Ն որոշման:

1.1.2 «Ներդրումային պլանը» մշակվել է ՏՕ 1.1.1.01.006.0327-2008 («Ատոմային կայանի բլոկի շահագործման ժամկետի երկարացում») դրույթների համաձայն:

1.1.3 «Ներդրումային պլանը» մշակվել է «Հայկական ԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման՝ ՀՀ Կառավարության 27.03.2014 թ.-ի №12 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած **ՄՅ.ՅՏԴ.17. ՐՓՅ-053** ծրագրի» մշակման նպատակով:

«Ներդրումային պլանը» ստեղծվել է ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքների կազմակերպումը իրականացնելու համար միջոցների և պայմանների որոշման նպատակով:

## 1.2 Կիրառման և տարածման բնագավառը

1.2.1. «Ներդրումային պլանը» կիրառվում և հանդիսանում է պարտադիր «ՀԱԷԿ» ՓԲԸ գործունեության ընթացքում:

1.3. ՀԱԷԿ-ի №2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՇԱՆԱԿԱԾ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՋԱԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ:

1.3.1 Սույն «Ներդրումային պլանի» կառավարումն իրականացվում է «ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրենի հրամանով հաստատված, շահագործման ժամկետի երկարացման պարագայում՝ որակի ապահովման Ծրագրին համապատասխան:

1.3.2 Իրավասու Մարմինների կողմից ստեղծվել է Համատեղ Կորդինացնող Կոմիտե(ՀԿԿ)՝ ՀԱԷԿ №2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ոլորտում համագործակցելու մասին ՀՀ և ՌԴ միջկառավարական Համաձայնագրի՝ առ 20դեկտեմբերի 2014թ, իրականացումն ուղղորդելու և հսկելու նպատակով:

1.3.3 Լիազոր Կազմակերպություններում (“Ռուսատոմ Սերվիս” ԲԸ և “ՀԱԷԿ” ՓԲԸ ) ստեղծվել են Օպերատիվ Խորհուրդներ՝ ՇԺԵ Ծրագրի իրականացման ընթացքում գործերի անընդհատ վերահսկման և ժամանակին շտկող միջոցների դիմելու համար:

1.3.4 Լիազոր Կազմակերպություններ (“Ռուսատոմ Սերվիս” ԲԸ և “ՀԱԷԿ” ՓԲԸ ) կազմավորել են Համատեղ Աշխատանքային Խումբ(ՀԱԽ)՝ Կատարողի և Պատվիրատուի իրավասությունների շրջանակից դուրս գտնվող, ՇԺԵ Ծրագրի իրականացման ընթացքում առաջացող ընթացիկ հարցերի օպերատիվ լուծման նպատակով:

1.3.5 ՀՀ-ում ատոմային էներգետիկայի առանձնահատկությունից ելնելով “ՀԱԷԿ” ՓԲԸ-ն միաժամանակ հանդիսանում է և ՀԱԷԿ-ի օպերատոր և Շահագործող

կազմակերպություն, այսինքն իր վրա է վերցնում ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի ՇԺԵ-ի ոլորտում գործնետության բոլոր պարտավորությունները:

- 1.3.6 “ՀԱԷԿ” ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենը՝ որպես Շահագործող կազմակերպության ղոկավար հանդիսանում է ՀԱԷԿ №2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման ոլորտում ՀՀ Կառավարության, ԷԵԵԲՊ նախարարության և ՀՀ Կարգավորող մարմնի (ՀՀ ՄԱԿ ՊԿ) բոլոր որոշումների կատարման պատասխանատուն:

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### 2.1. Սույն «Ներդրումային պլանը» մշակվել է հետևյալ ղեկավար փաստաթղթերի համապատասխան.

- «ՀԱԷԿ № 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման պահանջներ» (ՀՀ կառավարության՝ 2012 թ.-ի օգոստոսի 23-ի № 1085-Ն որոշման հավելված),
- ՔԸ-ՅՕ-0291-01. Որակի համակարգ. Առաջին սերնդի ատոմային կայանների էներգաբլոկների շահագործման ժամկետների երկարացմանն ուղղված աշխատանքների կատարման որակի ապահովման ծրագիր ,
- ՔԸ ՅՕ 0526-2004. Ատոմային կայանի էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետի համար նախապատրաստելու ծրագրի բովանդակության տիպային պահանջներ:

### 2.2. Սույն «Ներդրումային պլանը» որոշում և ներառում է ՇԺԵ գործընթացի հետևյալ բաղադրիչների ապահովմանն ուղղված կազմակերպական միջոցառումները.

- 2.2.1 ՀԱԷԿ № 2 էներգաբլոկի շահագործման սահմանված ժամկետի երկարացման սկզբունքային հնարավորության նախնական հիմնավորում:
- 2.2.2 ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման սահմանված ժամկետի երկարացման բնագավառում «ՀԱԷԿ» ՓԲԸ գործունեության հիմնական ուղղությունները ՀԱԷԿ-ի № 2 էներգաբլոկի շահագործման սահմանված ժամկետի երկարացման սկզբունքային տեխնիկական հնարավորության ամփոփիչ նախնական հիմնավորում :
- 2.2.3 Գործունեության ուղղություններից յուրաքանչյուրի հետ կապված աշխատանքների կատարման կազմը (խոշորացված կազմը) և ժամկետները
- Շահագործման սահմանված ժամկետների երկարացումը հիմնավորելու նպատակով կատարվող լրացուցիչ զննման ենթակա համակարգերի, բաղադրիչների և կառուցատարրերի (ՀԲԿ) ցանկ:
  - ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի՝ գրեթե սպառած ռեսուրսը վերականգնելու անհնարինության և աննպատակահարմար լինելու պատճառով փոխարինման ենթակա տարրերի ցանկ

- Լրացուցիչ ժամանակահատվածում անվտանգ շահագործումը հնարավոր դարձնելու նպատակով արդիականացման ենթակա համակարգերի և առանձին տարրերի ցանկ
- ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման արդյունավետությունը և խնայողականությունը բարձրացնելու նպատակով արդիականացման ենթակա համակարգերի և առանձին տարրերի ցանկ
- ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի անվտանգության, հուսալիության բարձրացման և ապահովման միջոցառումների ցանկ:

### 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱԷԿ-ի №2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

#### 3.1. ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի տեխնիկական պատմությունը (01.05.2017թ-ի դրությամբ)

Ռեակտորի տիպը – **ՋՋԷՌ-440 (Վ-270)**

Շահագործման հանձնումը – **05.01.1980 թ.**

Անցումը երկարատև կանգի ռեժիմի – **18.03.1989 թ.**

Շահագործման կրկնակի հանձնումը – **05.11.1995 թ.**

Գործարկումների (կանգերի) ընդհանուր քանակը **-134 (որից 55-ը՝ ՎՊ-1-ով (A3-1) պայմանավորված):** ՎՊ-1-ի հիմնական զանգվածը (41) բաժին է ընկնում շահագործման սկզբնական շրջանին (1980-1989թթ.):

Առաջին կոնտուրի հիդրավլիկ փորձարկումների քանակը՝ **43**, որից:

- 5-ը ամրության ստուգման նպատակով՝ 195 կգ/սմ<sup>2</sup> ճնշմամբ,
- 6-ը ամրության ստուգման նպատակով՝ 175 կգ/սմ<sup>2</sup> ճնշմամբ,
- 10-ը կիպության ստուգման նպատակով՝ 156 կգ/սմ<sup>2</sup> ճնշմամբ,
- 22-ը կիպության ստուգման նպատակով՝ 140 կգ/սմ<sup>2</sup> ճնշմամբ:

**Շահագործման տևողությունը:**

- Օրացուցային – **37 տարի և 5 ամիս**
- Աշխատանքային պարամետրերով – **221640 ժամ (9235 օր ≈ 25,3 տարի)**
- Էֆեկտիվ օր – **7657 (≈ 21,0 տարի).**

#### 3.2 ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման լիցենզավորման առանձնահատկությունները

- №2 էներգաբլոկի շահագործումն իրականացվում է 2011թ. ապրիլին ՀՀ ՄԱԿ ՊԿ-ի կողմից 10 տարի ժամկետով (մինչև 2021թ. ապրիլը) տրված լիցենզիայի հիման վրա:
- Համաձայն տրված լիցենզիայի գործողության պայմանների՝ ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նշանակված ժամկետն ավարտվում է 2016թ. սեպտեմբերին:

- Ելնելով Հայաստանում առկա էներգետիկ, տնտեսական և սոցիալական իրավիճակից՝ ՇԺԵ նախագիծը պետք է իրականացվի առանց բլոկի երկարատև կանգի. այսինքն՝ ՊԿՎ-ների ընթացքում, ինչով պայմանավորված՝ յուրաքանչյուր հերթական ՊԿՎ-ից հետո «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պետք է ՀՀ ՄԱԿ ՊԿ ներկայացնի №2 էներգաբլոկի անվտանգ և հուսալի շահագործումը շարունակելու հնարավորության հիմնավորում:
- Ներկայացվող փաստաթղթերին վերաբերող պահանջները սահմանվում են ՀՀ Կառավարության 2012թ. օգոստոսի 23-ի № **1085-Ն** որոշման հավելվածում («ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացմանը ներկայացվող պահանջներ»):
- Դիտարկելով ներկայացվող հիմնավորումները՝ ՀՀ ՄԱԿ ՊԿ-ն յուրաքանչյուր ՊԿՎ-ից հետո թույլ է տալիս շարունակել շահագործումը մինչև հաջորդ ՊԿՎ-ն (կամ մինչև 2021թ. սեպտեմբերը)՝ համապատասխան փոփոխություններ կատարելով Լիցենզիայի գործողության պայմաններում:
- ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նոր լիցենզիա տրամադրելու համար անհրաժեշտ է շտկել «Հայկական ԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման երկարացման լիցենզավորման գործող պլանը», որում նշվում են այն փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և ՀՀ ՄԱԿ ՊԿ ներկայացնելու ժամկետները, որոնց հիման վրա որոշում է ընդունվում ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի հետագա շահագործումը թույլատրելու վերաբերյալ (նոր լիցենզիա տրամադրելու վերաբերյալ):

### **3.3 ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի ՇԺԵ վերաբերյալ որոշման ընդունմանը նպաստող նախադրյալներ**

- ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի շահագործման նախագծային (նշանակված) ժամկետի ավարտվելը 2016թ. սեպտեմբերին,
- ԶԶԷՌ-440 տիպի ռեակտորներով գործող ԱԷԿ-ների շահագործման նախագծային ժամկետի հիմնավորման ընդունված հաշվարկային բազայի պահպանողականությունը,
- ՀԱԷԿ-ի էներգաբլոկների լիազոյապաշարային շահագործումն առանց միջուկային և/կամ ճառագայթումային անվտանգության պահանջների խախտման հետ կապված ինցիդենտների,
- անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքների կատարված և կատարվելիք ծավալները,
- բարձր որակավորում ունեցող փորձառու օպերատիվ և վերանորոգման անձնակազմի առկայությունը,
- երկարատև կանգի ռեժիմից (**1989թ. մարտի 18-ից**) հետո էներգաբլոկը շահագործման կրկնակի հանձնմանը (05.11.1995թ.) նախապատրաստելու շրջանում կատարված նորոգման և վերականգնման աշխատանքների դրական փորձի առկայությունը,
- Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Ֆինլանդիայի, Հունգարիայի, Չեխիայի, Սլովակիայի ԱԷԿ-ների տվյալ տիպի ռեակտորային կայանքների շահագործման ժամկետի երկարացման դրական փորձը,

- Ըստ ավարտված Համալիր հետազոտման արդյունքների՝ էներգաբլոկի չփոխարինվող և չվերականգնվող տարրերի տեխնիկական վիճակի փորձագիտական գնահատումից և նրանց մնացորդային գոյապաշարի առկայության վերլուծական հիմնավորումից բխող էներգաբլոկի ՇԺԵ հնարավորության նախնական լավատեսական կանխատեսումը,
- Համալիր հետազոտման արդյունքները ներկայացված են “ՀԱԷԿ-ի №2 էներգաբլոկի համալիր հետազոտման արդյունքների ամփոփիչ հաշվետվության” մեջ. ОТЧ АТЭ.116.0918-2015 (այսուհետ՝ “Ամփոփիչ հաշվետվություն”),
- բնական էներգակիրների հայտնի դեֆիցիտով և Հայաստանի հաղորդակցական մեկուսացմամբ պայմանավորված կրիտիկական էներգետիկ իրավիճակը Հայաստանում,
- ՀԱԷԿ №2 էներգաբլոկի շահագործման վերսկսման պահից (05.11.1995թ-ից սկսած) արտադրվել է ավելի քան 48,603 մլրդ. Կվտ. ժամ էլեկտրաէներգիա, իսկ ամբողջ ժամանակահատվածում ( 05.01.1980 թ. սկսած)՝ 71,390 մլրդ. Կվտ.ժամ: ՀԱԷԿ №2 էներգաբլոկի բաժինը հանրապետությունում արտադրվող էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրության մեջ ներկայումս կազմում է 40 %.
- ՀԱԷԿ-ը շահագործումից դուրս բերելու դեպքում առավել թանկ փոխարինող էլեկտրաէներգիայի( 2.5÷3 անգամ) գնման անհրաժեշտությունը, որը կոմպենսացնում է ՀԱԷԿ կորցվող էներգետիկ հզորությունները, հանրապետության վրա նստում է տարեկան մոտավորապես 150 մլն. ԱՄՆ դոլար
- ՇԺԵ Նախագծի իրականացման ընթացքում էներգաբլոկի էներգիա արտադրող համակարգերի վերականգնումը պլանավորվում է համատեղել նրանց արդիականացման հետ, որը ապահովում է էներգաբլոկի ելքի հզորության մեծացումը ավելի քան 15% (առանց ռեակտորային տեղակայանքի հզորության փոփոխության), որը կանդրադառնա ՇԺԵ ծախսերի փոխհատուցվելիության վրա:
- ՀԱԷԿ №2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման պլանավորվող ֆինանսական ծախսերը ավելի, քան մեկ կարգ պակաս այն ֆինանսական ծախսերից, որոնք անհրաժեշտ են համադրելի հզորության էներգիա արտադրող օբյեկտների կառուցման և շահագործման հանձնելու համար:
- ՀՀ Կառավարության № 461-Ն որոշումը ՀԱԷԿ շահագործման ժամկետի երկարացման վերաբերյալ ընդունվել է 2012 թ. ապրիլի 19-ին

**4. ՀԱԷԿ №2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ “ՀԱԷԿ” ՓԲԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԿԱԶՄԱԿԵՐՊԱ-ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

- 4.1. “ՀԱԷԿ” ՓԲԸ գործունեությունը ՀԱԷԿ №2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման բնագավառում սկսվել է ՀՀ Կառավարության 19.04.2012թ. № 461-Ն շահագործման երկարացման վերաբերյալ Որոշմամբ:
- 4.2. Գործունեության հիմնական ուղղությունները ՇԺԵ բնագավառում սահմանվում են ՀՀ Կառավարության նույն Որոշմամբ, ինչպես նաև “ՀԱԷԿ №2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացմանն ուղղված պահանջներով”, որոնք շարադրված են ՀՀ Կառավարության 2012թ. օգոստոսի 23-ի № 1085-Ն Որոշման հավելվածում:
- 4.3. ՀՀ Կառավարության՝ ՀԱԷԿ շահագործման երկարացման 19.04.2012թ. № 461-Ն Որոշման տեխնիկական և կազմակերպչական ապահովման համար, 2014 թ դեկտեմբերի 20-ին կնքվել է “Համաձայնագիր ՌԴ կառավարության և ՀՀ կառավարության միջև՝ վերաբերող ՀԱԷԿ №2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման գործում համագործակցությանը”, որում նշանակված են՝

**Իրավասու Մարմիններ.**

- ՌԴ կողմից – ՌՈՍԱՏՕՄ Պետական Կորպորացիա
- ՀՀ կողմից–Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

**Համաձայնագրի կատարման համար պատասխանատու լիազորված կազմակերպություններ .**

- ՌԴ կողմից – “Ռուսատոմ Սերվիս” ԲԸ
- ՀՀ կողմից – “ՀԱԷԿ” ՓԲԸ

- 4.4 ՀԱԷԿ շահագործման երկարացման վերաբերյալ ՀՀ Կառավարության 19.04.2012թ. № 461-Ն Որոշման իրականացման ֆինանսական ապահովման համար 2015թ. փետրվարի 5-ին կնքվել է “Համաձայնագիր ՌԴ կառավարության և ՀՀ Կառավարության միջև՝ ՀՀ Կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու վերաբերյալ՝ ՀՀ տարածքում ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարացմանը վերաբերող աշխատանքների ֆինանսավորման համար”, որում նշանակվում են

**4.5 Համաձայնագրի կատարման համար պատասխանատու լիազորված կազմակերպություններ .**

- ՌԴ կողմից – ՌԴ Ֆինանսների նախարարություն և ՌԴ Տնտեսական զարգացման նախարարություն
- ՀՀ կողմից – ՀՀ Ֆինանսների նախարարություն և ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն

**Միջպետական Համաձայնագրի պայմաններով Հայաստանին տրամադրվում է.**

- Պետական արտահանման վարկ՝ 270 մլն. ԱՄՆ դոլարի չափով
- Վարկի օգտագործումը նախատեսված է 2015÷2019 թթ ընթացքում 10 տարվա ընթացքում վարկի մարումով՝ 2020թ. հունվարի 15-ից սկսած ամենօրյա հիմունքով՝ 3% տարեկան հավելվող վճարի պայմաններով վարկի յուրաքանչյուր գումարի օգտագործման օրվանից սկսած
- Դրամաշնորհ (անհատույց օգնություն) 30 մլն. ԱՄՆ դոլարի չափով  
Դրամաշնորհի միջոցները նախատեսված են ավանսային վճարումները ըստ պայմանագրի կատարելու համար (N<sup>o</sup> 309/688-Ճ Պայմանագրի Լրացուցիչ Համաձայնագրով)՝ կնքված «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Ռուսաստան Սերվիս» ԲԸ միջև

**Լիազորված Մարմինների կողմից («ՀԱԷԿ» ՓԲԸ և «Ռուսաստան Սերվիս» ԲԸ ) կնքվել են**

- “ ՀԱԷԿ N<sup>o</sup>2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման համար կատարվող աշխատանքների, ծառայությունների մատուցման և ապրանքի մատակարարման N<sup>o</sup> 309/688-Ճ Պայմանագիրը”  
N<sup>o</sup> 309/688-Ճ Պայմանագիրը հանդիսանում է շրջանակային և որոշում է Լիազորված Կազմակերպությունների կողմից դրանց կից մինչև 300մլն. ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով Լրացուցիչ Համաձայնագրեր կնքելու հնարավորությունը: Ընդ որում, հենց Պայմանագրի մեջ վճար չի նախատեսվում:  
N<sup>o</sup> 309/688-Ճ Պայմանագրի գործողության ժամկետը – **31.12.2019**
- “ ՀԱԷԿ շահագործման ժամկետի երկարացման նախագծի կառավարման N<sup>o</sup> 309/688-Ճ Պայմանագրի N<sup>o</sup> 1 Լրացուցիչ Համաձայնագիր ”  
N<sup>o</sup>1 Լրացուցիչ Համաձայնագրի արժեքը կազմում է 30 մլն. ԱՄՆ դոլար  
N<sup>o</sup>1 ԼՀ գործողության ժամկետը – **31.12.2019**
- “N<sup>o</sup> 309/688-Ճ Պայմանագրի՝ ՀԱԷԿ N<sup>o</sup> 2 էներգաբլոկի համակարգերի, կոնստրուկցիաների և բաղադրամասերի համալիր հետազոտության և ՀԱԷԿ N<sup>o</sup> 2 էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին նախապատրաստելու Ծրագրի մշակման N<sup>o</sup> 2 Լրացուցիչ Համաձայնագիր ”  
N<sup>o</sup>2 ԼՀ արժեքը կազմում է **7155,8 մլն.** ԱՄՆ դոլար  
N<sup>o</sup>2 ԼՀ գործողության ժամկետը- **31.12.2017**

**5. ՀԱԷԿ N°2 ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ.**

ՀԱԷԿ N°2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման (ՇԺԵ) աշխատանքները պետք է կատարվեն 2 փուլով.

- **I Փուլ** – էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման տեխնիկական հնարավորության, տնտեսական իրագործելիության հիմնավորում
- **II Փուլ** – էներգաբլոկը՝ լրացուցիչ ժամանակահատվածում շահագործման նախապատրաստելը.

ՌԴ Կառավարության և ՀՀ Կառավարության միջև ՀԱԷԿ N°2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացմանը վերաբերող համագործակցության համաձայնագրով նախատեսվում է “ներդրումային պլանի ” երկու էտապների գույքահեռ կատարում:

**5.1. ՓՈԻԼ I (Էներգաբլոկի ՇԺԵ տեխնիկական հնարավորության հիմնավորումը)**

**1-ին փուլում կատարման ենթակա է.**

- Էներգաբլոկի համալիր հետազոտություն:
- Էներգաբլոկի անվտանգության գնահատում:
- ռեակտորային տեղակայանքի խողովակաշարերի և հիմնական սարքավորումների, ինչպես նաև անվտանգության համակարգեր և անվտանգության համար կարևոր համակարգի տարրեր պարունակող շենքերի և շինությունների շահագործման ժամկետի երկարացման հնարավորության հիմնավորում:
- “ՀԱԷԿ N°2 էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետի նախապատրաստման ծրագրի ” մշակում:
- “ՀԱԷԿ N°2 էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետի նախապատրաստման ծրագրի ” իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերի նախնական գնահատումը:

**5.1.1 Համալիր հետազոտության հիմնական արդյունքները**

- ըստ ավարտված համալիր հետազոտության արդյունքների թողարկվել է “Ամփոփիչ հաշվետվություն՝ ըստ ՀԱԷԿ N°2 էներգաբլոկի համալիր հետազոտության արդյունքների ՕԿԿ ԱՏՅ.116.0918-2015” (այսուհետ՝ “ամփոփիչ հաշվետվություն”):
- ըստ ավարտված համալիր հետազոտության արդյունքների՝ խոչընդոտներ չեն հայտնաբերվել պլանավորված լրացուցիչ ժամկետում ՀԱԷԿ N°2 էներգաբլոկի անվտանգ և հուսալի աշխատանքի ապահովման համար ( “ամփոփիչ հաշվետվության” 8-րդ բաժին):
- հայտնաբերվել են իրենց ռեսուրսը սպառած փոխարինման ենթակա տարրեր:
- որոշվել են այն տարրերը, որոնք ըստ նախնական փորձագիտական գնահատականի ունեն շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում իրենց շահագործման համար բավարար մնացորդային գոյապաշար, որոնց համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանքներ՝ մնացորդային գոյապաշարի հետազոտության, գնահատման և հիմնավորման վերաբերյալ՝ ըստ հատուկ մեթոդիկայի և/կամ ծրագրերի:

- հայտնաբերվել են տարրեր, որոնց տեխնիկական վիճակը պահանջում է նրանց արդիականացումը:
- որոշվել են այն տարրերը, որոնց տեխնիկական վիճակը և գոյապաշարային բնութագրերը կարող են վերականգնվել կամ պահպանվել շահագործման լրացուցիչ ժամկետի համար շտկված տեխսպասարկման և վերանորոգման համակարգի միջոցով:
- կատարվել է տեխսպասարկման և վերանորոգման գործող համակարգի արդյունավետության գնահատում՝ ներառյալ շահագործական վերահսկումը, որը ապահովում է ՀԿԲ տեխնիկական վիճակի մոնիթորինգ՝ հիմնավորված պարբերականությամբ №2 էներգաբլոկի շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում: Հաստատվել է համակարգի համապատասխանությունը միջուկային էներգետիկայում գործող անվտանգության նորմերի և կանոնների, սարքավորումների տեխնիկական սպասարկման և վերանորոգման կազմակերպման ուղեցուցային փաստաթղթերի պահանջներին:
- կատարվել է ՀԱԷԿ-ում գործող թարմ և աշխատած միջուկային վառելիքի հետ աշխատելու համակարգի գնահատումը և կայանի հնարավորության գնահատումը՝ ապահովել շահագործման լրացուցիչ ժամկետում առաջացած լրացուցիչ քանակի աշխատած միջուկային վառելիքի անվտանգ պահումը ՀԱԷԿ-ում:
- ՀԱԷԿ-ում գործող թարմ և աշխատած միջուկային վառելիքի հետ աշխատելու համակարգը ներկայումս ամբողջությամբ համապատասխանում է “Ատոմային էլեկտրակայանների անվտանգության ապահովման ընդհանուր դրույթները” ОПБ-88/97. ПНАЭ Г-01-011-97 փաստաթղթի պահանջներին:
- Շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում՝ մինչև 2023 թ., ՀԱԷԿ-ում գործող աշխատած միջուկային վառելիքի (ԱՄՎ) հետ աշխատելու համակարգի համապատասխանությունը ПНАЭ Г-01-011-97 պահանջներին կարելի է ապահովել աշխատած միջուկային վառելիքի մի մասի տեղափոխումով երկրորդ էներգաբլոկի միջուկային վառելիքի պահման ավազանից (2БВ) առաջին էներգաբլոկի միջուկային վառելիքի պահման ավազան (1БВ)՝ ապահովելու համար №2 ռեակտորի ակտիվ գոտու լրիվ բեռնաթափման հնարավորություն ցանկացած պահի ( ПНАЭ Г-01-011-97 4.8.1 կետի պահանջների բավարարում “ Միջուկային վառելիքի պահեստարանի տարողությունը պետք է հիմնավորել՝ հաշվի առնելով ակտիվ գոտու լրիվ բեռնաթափման հնարավորության ապահովումը ցանկացած պահի”)
- Համաձայն գոյացող աշխատած ջերմանջատիչ հավաքվածքների քանակի կանխատեսական հաշվարկների՝ ապահովելու համար ПНАЭ Г-01-011-97 4.8.1. կետի պահանջները ՇԺԵ ընթացքում , 2023թ. հետո պահանջվում է 2БВ ավազանի տարողության մեծացում՝ դարակաշարերի վերին հանովի բաժնի երկրորդ լրակազմի կամ ԱՄՎ խտացված պահպանման դարակաշարերի ձեռքբերման միջոցով: Այդ հարցի վերաբերյալ որոշումը ընդունում է շահագործող կազմակերպությունը ( “ՀԱԷԿ” ՓԲԸ ) և համաձայնեցնում է ՀՀ ՄԱԿ ՊԿ հետ ՇԺԵ Ծրագրի սահմաններից դուրս:
- ՀԱԷԿ տարաշքում գոյացող ՃԱԹ պահման և վերամշակման հնարավորության գնահատում:

Շտկված և նորացված ՀԱՀ վետությունը պետք է ներկայացվի ՀՀ ՄԱԿ ՊԿ-ի դիտարկմանը՝ հավանության համար

5.1.2. **ՀԱԷԿ №2 էներգաբլոկի անվտանգության գնահատումը կատարվում է հետևյալ նպատակով.**

- ՀԱԷԿ №2 էներգաբլոկի նախագծի և նրա ընթացիկ տեխնիկական վիճակի շեղումների հայտնաբերումը ատոմային էներգետիկայի բնագավառում գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներից,
- ՆՏՓ պահանջներին՝ հայտնաբերված անհամապատասխանությունների՝ ՀԱԷԿ №2 էներգաբլոկի շահագործման անվտանգության վրա ունեցած ազդեցության վերլուծությունը և այդ անհամապատասխանությունների վերացմանն ու փոխհատուցմանն ուղղված կատարված և պլանավորվող միջոցառումների արդյունավետության գնահատումը,
- Շահագործման լրացուցիչ ժամկետում ՀԱԷԿ №2 էներգաբլոկի անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների մշակում (հաշվի առնելով անհամապատասխանությունների վերլուծության, համալիր հետազոտության արդյունքները, ինչպես նաև հաշվի առնելով կատարված և պլանավորվող փոխարինումներն ու արդիականացումները ),
- Շահագործման լրացուցիչ ժամկետում ՀԱԷԿ №2 էներգաբլոկի անվտանգության հիմնավորման աշխատանքների ծավալի որոշումը (ԱՀՀ նորացված տարբերակի հաջորդ մշակումը ) .

5.1.3. “ՀԱԷԿ №2 էներգաբլոկը շահագործման լրացուցից ժամկետին նախապատրաստելու ծրագրի” մշակումը (աշխատանքի ծավալի և նոմենկլատուրայի ձևավորում)

5.1.3.1. ՀԱԷԿ №2 էներգաբլոկի անվտանգության գնահատականի, համալիր հետազոտության արդյունքների հիման վրա ձևավորվում է ՀԱԷԿ №2 էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին նախապատրաստելու միջոցառումների պլան (աշխատանքների ծավալը և բովանդակությունը, որոնց կատարումը պետք է ապահովի շահագործման լրացուցիչ ժամկետի ընթացքում էներգաբլոկի շահագործման տեխնիկական հնարավորությունը՝ պահպանելով կանոնակարգված պահանջները).

Նշված պլանում ընդգրկվում են.

- Շահագործման լրացուցիչ ժամկետում էներգաբլոկի անվտանգության ապահովման տեխնիկական միջոցառումներ ,
- Գոյապաշարը սպառած տարրերի փոխարինման միջոցառումներ,
- 1÷3 անվտանգության դասի տարրերի և համակարգերի արդիականացման աշխատանքներ
- Որպես էլեկտրականություն արտադրող ձեռնարկություն՝ ՀԱԷԿ №2 էներգաբլոկի գործառումը ապահովող տարրերի և համակարգերի արդիականացման աշխատանքներ
- Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի ծառայության ժամկետի երկարացման հիմնավորման աշխատանքներ,
- Շահագործման լրացուցիչ ժամկետում էներգաբլոկի անվտանգության հիմնավորման աշխատանքներ,

- Համակարգերի (տարրերի) փորձարկման և կարգաբերման աշխատանքների անցկացում
- Էներգաբլոկի շահագործման և նրա անվտանգության հիմնավորման փաստաթղթերի լրամշակում,
- Տարրերի գոյապաշարի կառավարման, նրանց տեխնիկական սպասարկման և վերանորոգման վերաբերյալ փաստաթղթերի լրամշակում,
- Շահագործող անձնակազմի վերապատաստում:

5.1.3.2. Նշված պլանում ներառված յուրաքանչյուր միջոցառման համար “ՀԱԷԿ N°2 Էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին նախապատրաստելու ծրագրում” պետք է սահմանվեն.

- Աշխատանքների կատարման ժամանակացույցը՝ նրանց բովանդակականության և հաջորդականության նշումով,
- Որակի ապահովման ծրագրի մշակման ժամկետները՝ ներառյալ կատարված աշխատանքների ընդունման պահանջները,
- Մշակման ենթակա աշխատանքային ծրագրերի, տեխնիկական առաջադրանքների և այլ նախագծա-կոնստրուկտորական, կազմակերպչական և տեխնիկական փաստաթղթերի ցանկ,

5.1.3.3. Ձևավորված պլանի հիման վրա մշակվում է “ՀԱԷԿ N°2 Էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին նախապատրաստելու լծագիրը”

5.1.3.4. “ՀԱԷԿ N°2 Էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին նախապատրաստելու լծագիրը ” հաստատում է “ՀԱԷԿ” ՓԲԸ գլխավոր տնօրենը և այն համաձայնեցվում է ՀՀ ՄԱԿ ՊԿ հետ:

5.1.4 1-էտապի աշխատանքների արդյունքների հիման վրա շահագործող կազմակերպությունը ( “ՀԱԷԿ” ՓԲԸ ) Որոշում է ընդունում ՀԱԷԿ N°2 Էներգաբլոկի շահագործման լրացուցիչ ժամկետի և այդ ժամկետում Էներգաբլոկը շահագործման նախապատրաստելու վերաբերյալ: Որոշումը պետք է ներկայացվի կարգավորող մարմին (ՀՀ ՄԱԿ ՊԿ).

5.1.5 Ընդունված Որոշման հավելվածում շահագործող կազմակերպությունը, ( “ՀԱԷԿ” ՓԲԸ ) կարգավորող մարմնին (ՀՀ ՄԱԿ ՊԿ) պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

- 1) Էներգաբլոկի համալիր հետազոտության վերաբերյալ հաշվետվություն,
- 2) Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում գործող իրավական ակտերի պահանջներից ՀԱԷԿ N°2 Էներգաբլոկի փաստացի վիճակի և նախագծի շեղումների վերլուծության հաշվետվություն ,
- 3) ՀԱԷԿ N°2 Էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին նախապատրաստելու ծրագիր,

5.1.6 Ներկայացված փաստաթղթերի քննարկման հիման վրա ՀՀ ՄԱԿ ՊԿ հավանություն է տալիս 1-ին էտապի աշխատանքների արդյունքներին կամ շահագործող կազմակերպությանը ներկայացնում է լրացուցիչ աշխատանքների կատարման պահանջ: Կարգավորող մարմինը կատարում է նշված փաստաթղթերի քննարկումը վերջին փաստաթղթի գրանցումից հետո 90 օրվա ընթացքում:

5.1.7 ՀԱԷԿ №2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքների 1-ին էտապը համարվում է ավարտված, եթե “ՀԱԷԿ” ՓԲԸ ստանում է ՀՀ ՄԱԿ ՊԿ հավանությունը իր արդյունքների վերաբերյալ.

**5.1.8. Ծրագրերի իրականացմանն ուղղված անհրաժեշտ ֆինանսական ծախսերի նախնական գնահատումը:**

5.1.8.1. |ՇԺԵ ֆինանսական ծախսերի ընդհանուր գնահատման ընթացքում պետք է հաշվի առնել գների ակնկալվող փոփոխությունները (աճ) (+10% տարեկան )

5.1.8.2. |ՇԺԵ ֆինանսական ծախսերի ընդհանուր գնահատման ընթացքում պետք է հաշվի առնել ՀԱԷԿ-ին մատակարարվող արտադրատեսակների տեղափոխման, նրանց մաքսային ձևակերպման և բեռների պահեստավորման ծախսերը

5.1.8.3. |ՇԺԵ ֆինանսական ծախսերի ընդհանուր գնահատման ընթացքում պետք է հաշվի առնել ՀՀ ոչ ռեզիդենտների հարկի վճարումը

5.1.8.4. ՇԺԵ ֆինանսական ծախսերի ընդհանուր գնահատման ընթացքում պետք է հաշվի առնել “ՀԱԷԿ” ՓԲԸ վարկի սպասարկման ծախսերը

5.1.8.5. ՇԺԵ ֆինանսական ծախսերի ընդհանուր գնահատումը պետք է արտացոլի ՀԱԷԿ – ում կողմնակի կազմակերպությունների կողմից համակարգերի և սարքավորումների փորձման, փորձարկման, վերահսկման, մոնիտինգի և կարգաբերման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման ծախսերը

5.2. ՇԺԵ ֆինանսական ծախսերի ընդհանուր գնահատումը պետք է արտացոլի ՀԱԷԿ – ի օպերատիվ գործառնման ընթացիկ շահագործական ծախսերը պարապուրդների ընթացքում, ինչպես նաև անձնակազմի համար նախատեսված ծախսերը (աշխատավարձի վճարում) և նրա որակավորման պահպանումը :

**5.3. Փուլ II. ( ՀԱԷԿ №2 էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին նախապատրաստելը)**

**2-րդ էտապում կատարման ենթակա է .**

- “ՀԱԷԿ №2 էներգաբլոկը շահագործման լրացուցիչ ժամկետին նախապատրաստելու ծրագիրը ” շահագործման երկարացման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ ծավալով:
- ՀԱԷԿ №2 էներգաբլոկի չվերականգնվող և չփոխարինվող տարրերի մնացորդային գոյապաշարի հիմնավորումը՝ ըստ РД ЭО 0281
- Չվերականգնվող և չփոխարինվող տարրերի մնացորդային գոյապաշարի գնահատումը:
- Այն տարրերի փոխարինումը, որոնց գոյապաշարը սպառված է և վերականգնման ենթակա չէ:
- Համակարգերի և համակարգերի առանձին տարրերի արդիականացումը՝ էներգաբլոկի անվտանգության և շահագործման արդյունավետության բարձրացման նպատակով:
- “Շահագործման լրացուցիչ ժամկետում վերականգնվող տարրերի գոյապաշարի կաավարման ծրագրի ” մշակում:

- ՀԱԷԿ №2 էներգաբլոկի անվտանգության հիմնավորման հաշվետվության մշակում (ԱՀՀ):
- Շահագործման լրացուցիչ ժամկետում ՀԱԷԿ №2 էներգաբլոկի շահագործման լիցենզիա ստանալը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերի պատրաստումը:

Էներգաբլոկը շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքների 2-րդ էտապի ավարտից հետո շահագործող կազմակերպությունը ներկայացնում է ԱԷԿ-ի շահագործման լիցենզիայի երկարացման հայտ՝ ըստ ՀՀ օրենսդրության, սահմանված կարգով, լիցենզավորման պլանի համաձայն, որը համաձայնեցվել է ՀՀ ՄԱԿ ՊԿ հետ:

## 6. 2-րդ էտապի աշխատանքների կատարման յուրահատկությունները

